# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 368-Ա**
**« 19 » ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024Թ.**

## ԿԱՐԻՆԵ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման կարգը հաստատելու մասին» N181-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Կարինե Կոստանյանի հետ 2024 թվականի նոյեմբերի 19-ին կնքած համաձայնագիրը՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝**

1. Կարինե Կոստանյանին ազատել «ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից: Աշխատանքի վերջին օրը համարել 2024 թվականի նոյեմբերի 20-ը:
2. 2024 թվականի նոյեմբերի 21-ից «ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը դնել նույն դպրոցի ուսումնական գծով տնօրենի տեղակալ Աննա Հարությունյանի վրա:
3. «ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
4. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել հաստատության նյութական պատասխանատու անձանց:
5. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

**Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ**

**ք. Եղեգնաձոր**

**Հավելված**
**ՀՀ Վայոց ձորի մարզպետի**
**2024թ նոյեմբերի 19-ի**
**N 363 -Ա որոշման**

**«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ**

Հանձնաժողովի նախագահ՝

| | |
|---|---|
| Վահան Աբրահամյան | ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական |

Անդամներ՝

| | |
|---|---|
| Հուսիկ Հարությունյան | ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ |
| Գվիտոն Դավթյան | ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի պաշտոնում փորձագետ |